ում էր ճակատագրից որոշուած իր դերը. այն է՝ տալ պարզ սրտերին մի քիչ բերկրանք եւ մի քիչ ժպիտ ու յոգնաբեկ ու տառապակոծ ժողովրդի մէջ արթնցնել մանկական թարմ զգացումները:

Առաւօտից մինչեւ երեկոյ նրա սենեակի շուրջը երախաներ էին վխտում: Բարձրանում էին պատերի եւ տանիքների վրայ, ծակեր բաց անում, աչքը կպցնում ու նայում, բացականչում, ուրախանում: Խոզի տէրը էլ հանդիստ չունէր: Երախաները չէին բաւում, մեծերն էլ գալիս էին նայելու: Ժողովրդի կանայք, մօտակայ գիւղերից եկած չինականները, պառաւ մամերը, զինուորները, էլ ո՞վ չէր գալիս: Ժամերով կանգնում էին Կրկէսի շուրջը, սպասում, խօսում, պատմում: Այդքա՜ն էլ ժողովրդականութիւն...չտեսնուած բան:

Իսկ երեկոնե՛ը, ներկայացման ժամանակ... ասեղ ձգելու տեղ չկար: Ո՞րտեղից էլ այդքան ժողովուրդ... Գալիս էին քաղաքի հեռաւոր մասերից, հարուստ, աղքատ, պաշտօնեայ, ուսանող: Տոմսակները անմիջապէս սպառւում էին: Կրկէսի արտիստները ուրախ էին, ման էին գալիս գոռող աքլորների նման, կուրծքերը դուրս նետած, ինքնավստահ, կուշտ:

Երաժշտութիւնը քայլերգ էր նուագում: Ոսկեզօծ կոճակներով ծառաներ՝ տօ՝ մեր Համբարձումը, տօ՝ մեր Սաքոն՝ կանգնում էին դերակատարների դռան առջեւ, եւ ներկայացումը սկսւում էր: Էլ հա՜ռայ, էլ հո՜ւռայ, ծծկան երախաները մլաւում էին ,մեծերը ոտքերը փայտերին էին զարնում, ծափ տալիս, պոռում կամ շունչը յանկարծ կտրած՝ վտանգաւոր մի մարգանքի առջեւ՝ բերանները բաց, նայում էին, հիանում:

— Տօ՜ աղջի նայի՛ր...Է՞սենց էլ բան...

— Վա՜յ, մեռնիս դու, գլուխս պտոյտ եկաւ...

— Բռավո՜, բռավո՜, բռավո՜...

Իսկ երբ հապիտը խոզի վրայ նստած ներս էր մտնում, էլ ոգեւորութեան չափ չկար:

Խոզը առհասարակ լաւ էր տրամադրւում: Նա զգում էր մեծ բարմութեան անկեղծ եւ միամիտ այդ ոգեւորութիւնը եւ քթի ծակերը հաճելի կերպով շոյող քրտնքի ու տիղմի հոտը:

Բարձրանում էր տակառի վրայ, գլուխը վեր անում ու տիրոջ հետ խօսում իր կերպով՝ խորթկալով, ճչելով: Ցատկում էր, պտոյտ գալիս, պարում:

Կրկէսը ռումբի նման պայթում էր, դղրդում, ժաժ գալիս:

Եւ այսպէս, ամէն գիշեր:

* * *

Եւ ամէն գիշեր Պետական Թատրոնը դատարկ էր:

Առաջին օրերը ուշադրութիւն չդարձրին: Կրկէսը նորութիւն է, ամէն մարդ այնտեղ է վազում, բայց շուտ կը ձանձրանան:

Սակայն, երբ պրիմատոննան մի երեկոյ իր լաւագոյն դերի մէջ դուրս եկաւ բեմ եւ դահլիճի մէջ չորս մարդ տեսաւ, այն էլ ձրի տոմսակներով, հաղիւ կարողացաւ տեսարանը վերջացնել ու վարագոյրը դեռ չիջեցուցած՝ ուշաթափ վայր ընկաւ «խո՜ղ, խո՜ղ» պոռալով: Ամէնքը մտահոգուեցան:

Թատրոնի վարիչը որոշեց՝ «պէտք է մըրցիլ»: Բեմադրեցին Լունաչարսկու յեղափոխական մէկ պիեսը: Մեծ ոգիներ, յայտարարութիւններ, յօդուածներ: Ծախս:

Երեկոյեան, տասը հանդիսականներ անդուսպօրէն յօրանջում էին, իսկ Կրկէսը լեփ լեցուն էր:

Դերասանները սկսեցին մրթմրթալ: Մանաւանդ նրանք, որ թատրոնի մուտքից տակոս էին ստանում: Դա ի՞նչ բան է... արուեստը զոհում են...խոզը...

Վարիչը, որ Կրկէսի գալը ողջունել էր, դէպի քաղաքակրթութիւնը բացուած պատուհանը դոցեց եւ խորամանկօրէն «հակայեղափոխութիւն» բառը արտասանեց: Պետական բիւրեղէին հսկայ հարուած է... Լունաչարսկու պիեսան... Մոսկուան ի՞նչ պիտի մտածի...

* * *

Զեկան էլ գործում էր իր կողմից: Ոմն վաճառականներ համաձայնութիւն էին կապել Կրկէսի արտիստների հետ, չէնքը չինել և հիմա ահագին փող էին վաստակում: Անգիտակից ժողովուրդը ոչ միայն թատրոնը եւ ժողովները չէր յաճախում, այլ խոզի շուրջը այնպիսի ժողովրդականութիւն էր ստեղծում, որ Լենինն իսկ չի տեսել: Գործկոմի նախագահը, որ ար-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան